

ԻՆՏԵՆՆԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 338.23:622 (088.27)

Դ.Ա. ԱՆԴՐՈՅԱՆ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ

Հանքարդյունաբերական ծրագրերն իրականացնելիս, հանրության և համայնքների աջակցությունն ապահովելու նպատակով, հանքարդյունահանողների կողմից գործադրվող ջանքերի նկարագրման համար հանքարդյունաբերական ընկերությունները կիրառում են «պատասխանատու հանքարդյունաբերություն» տերմինը: Սա, այսպես կոչված, հանքարդյունաբերության սոցիալական լիցենզիան (ՀՍԼ) է: Եվ եթե ավելի վաղ հանքի կառավարչին հետաքրքրում էին միայն շահագործման հարցերը, ապա այժմ հանքարդյունաբերական օբյեկտի կայուն գործունեության համար անհրաժեշտ է հաստատել կապեր հանրության և համաձայնության գալ համայնքի հետ:

Դիտարկվում են ՀՍԼ-ի հարցերը:

Առանցքային բաներ. սոցիալական լիցենզիա, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, պատասխանատու հանքարդյունաբերություն:

Հանքարդյունաբերական ճյուղում վեճերը կարող են առաջացնել լուրջ խնդիրներ արդյունահանող ընկերությունների, տեղական համայնքների, իսկ որոշ դեպքերում նաև ազգային տնտեսությունների շրջանում:

Հանքի աշխատանքի ժամանակացույցի պլանավորման և շահագործման ընդմիջումները կարող են տևական լինել և թանկ արժենալ շահագործող կազմակերպության համար, իսկ ազդակիր համայնքները կարող են տուժել անորոշությունից և բացասական հետևանքներից:

Պատասխանատու հանքարդյունաբերությունն իր գործիքակազմով կոչված է օգնելու հանքարդյունաբերական գործունեության բոլոր կողմերին, նպաստելու վեճերի կանխմանը, լուծմանը և, վերջին հաշվով, օժանդակելու էկոլոգիապես պատասխանատու ձևաչափով շրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Վերջին տասնամյակում, բնակչության որոշակի հատվածների և խմբերի հակադրության պատճառով, մի քանի մայրցամաքներում օգտակար հանածոների ուսումնասիրության և արդյունահանման բազմաթիվ նախագծեր սառեցվել կամ դադարեցվել են: Շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերական գործունեության կանխատեսվող և իրական բացասական ազդեցությունները հանքարդյունաբերական ծրագրերին դեմ հանդես գալու համայնքների ամենահաճախակի պնդումն է:

Հանքարդյունաբերության դեմ քննադատական վերաբերմունքը բնորոշ է հատկապես այն շրջաններին, որտեղ բնակչության բարեկեցությունն ու կյանքի որակը կախված են էկոհամակարգային ծառայություններից, կամ այն վայրերին, որոնց բնակիչները նախկինում տուժել են հանքարդյունաբերության գործունեությունից:

Հաճախ համայնքները օբյեկտիվորեն դժգոհում են նաև իրենց բաժին հասնող ֆինանսատնտեսական օգուտների չափից՝ չնայած հանքարդյունաբերական ընկերությունների ստացած մեծ շահույթներին և կառավարության կողմից ստացվող բնօգտագործման վճարներին և ռոյալթիներին:

Շահույթի բաշխման նման հակասությունները, շրջանում տնտեսական աճով պայմանավորված կյանքի թանկացմանը զուգընթաց, կարող են լրացուցիչ պատճառ հանդիսանալ հանքարդյունաբերական նախագծերի զարգացմամբ պայմանավորված վեճերի, որոնք կարող են լրացուցիչ ուղղակի և անուղղակի ծախսեր [1] առաջացնել հանքարդյունաբերական ընկերություններում: Այդ իսկ պատճառով վերջիններիս առաջնահերթ խնդիրը վեճի կառավարումն է:

Վեճերի դերի ընկալումը բիզնեսի ներկայացուցիչների համար կարևոր է, քանի որ բնական ռեսուրսների հասանելիությունը գնալով բարդանում է:

Օգտակար հանածոների պաշարների հյուծումը և, միևնույն ժամանակ, դրանց նկատմամբ պահանջարկի մեծացումը ստիպում են մեծ թվով ընկերությունների աշխատել ավելի վիճահարույց շրջաններում: Հետազոտությունները [2] ցույց են տվել, որ հանքարդյունաբերության ոլորտում հասունացող և անխուսափելի վեճերն ունեն որոշ ընդհանրական նախանշաններ.

- Համայնքի կողմից դժգոհության և հիասթափության արտահայտություններ:
- Ընկերության մասնակցությամբ միջադեպերի ժամանակ համայնքի ներկայացուցիչների կողմից ֆիզիկական ռեակցիա:
 - Զենքի կիրառմամբ բռնության բարձր մակարդակ՝ զինված անվտանգության ծառայություն ունեցող օբյեկտներում:
 - Համայնքի բնակիչների շրջանում անվստահության բարձր մակարդակ՝ պայմանավորված կառավարության կողմից իրավական նորմերի կողմնակալ կիրառմամբ:
 - Կոռումպացված դատական և իրավաբանական հաստատություններ, որոնք նվազեցնում են դժգոհ քաղաքացիների՝ արդարադատությունից օգտվելու կամ արդար և խաղաղ վճիռ ունենալու հնարավորությունը:
 - Պետական մարմինների կողմից մարդու իրավունքների խախտումների դեպքերի հաճախակիության ավելացումը:

Սոցիալական պատասխանատվությունը սովորաբար ներառում է աշխատակիցների անվտանգության և առողջության, մարդու հիմնարար իրավունքների, ավանդույթների և արժեքների պահպանման, հանքարդյունաբերական ընկերության երաշխիքները:

Ներկայումս բազում հայտնի հանքարդյունաբերական ընկերություններ ներկայացնում են իրենց գործունեության սկզբունքները Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ռազմավարություններում: Այդ միտումը ծագեց, երբ համայնքները սկսեցին բողոքներով հանդես գալ անպատասխանատու հանքարդյունահանման ծրագրերի դեմ: ԿՍՊ փորձը դարձավ ընկերության գործունեության գնահատման ստանդարտ գործիք: ԿՍՊ ռազմավարությունները սկսեցին կիրառվել այն ներդրողների կողմից, որոնց համար գործունեության հիմնական ցուցանիշը կայունությունն է, ոչ թե կարճաժամկետ հեռանկարում գերշահույթի ստացումը:

Հանքարդյունահանման սոցիալական լիցենզիայի հայեցակարգը վերջին ժամանակներում լայն գիտական ճանաչում և գործնական կիրառություն է ստացել մի շարք երկրներում: Այն առաջ է եկել 1990-ականների վերջին, երբ շատ երկրներում ավելի հաճախակի դարձան հանքարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացած բացասական ազդեցության դեպքերը՝ պոչամբարների պատվարներին ճեղքերի առաջացումը, արտահոսքերը, փլուզումները [3] և շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության ու սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված վեճերը:

Առավել հայտնի օրինակներից են 2012 թ.-ին «Մինաս Կոնգա» ոսկու և պղնձի հանքի շահագործման դեմ վեճերը և բողոքի ակցիաները ազդակիր համայնքների կողմից, որոնց ժամանակ սպանվեցին ցուցարարներ [4]:

Նման դեպքերը կանխելու նպատակով հանքարդյունաբերության ոլորտում նախագծերի իրականացման խնդիրներին նվիրված և Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից 1997 թվականին կազմակերպված համաժողովում հանքարդյունաբերության կանադացի փորձագետ Ջ. Քունիի կողմից առաջ քաշվեց համայնքների և հանքարդյունաբերական ընկերությունների միջև վստահելի հարաբերությունների համակարգի և փոխգործակցության սահմանման անհրաժեշտության գաղափարը, որը ստացավ հանքարդյունահանման սոցիալական լիցենզիա ՀՍԼ (social license to operate) անվանումը: Քունին այն օգտագործեց հանքարդյունաբերական ընկերության և համայնքի միջև հարաբերությունների որակի (տնտեսական, էկոլոգիական, սոցիալական) նկարագրման համար:

Քունիի պնդմամբ, կառավարությունից ստացվող շահագործման թույլտվություններից բացի, կարևոր է ազդակիր համայնքների և նրանց աջակիցների հետ մշտական դրական հարաբերությունների ստեղծումը, ցույց տալով, որ արդյունաբերությունը հետևողական է տեղացիների սպասելիքների և պահանջների բավարարման հարցերում [5]:

Լիցենզիա տերմինի օգտագործումը, ինչպես պետության կողմից տրամադրված լիցենզիաների, այնպես էլ ՀՍԼ-ի դեպքում, ռիսկերի երկու ուղղվածությունների հավասար կարգավիճակի վկայությունը կարող է լինել:

ՀԲ-ի սահմանման համաձայն՝ ՀՍԼ-ն ազդակիր համայնքների և հանքարդյունահանող ընկերությունների միջև համապարփակ տեղեկատվության հիման վրա ստացված ազատ և նախնական համաձայնություն է: Հայեցակարգի ամբողջական իմաստը ոչ միայն նման համաձայնության հասնելն է, այլև մշտապես պահպանելը, վերարտադրելն է, քանի որ դրան հասնելու չափանիշները կարող են փոխվել ժամանակի ընթացքում:

Այսօր ՀՍԼ-ն ամենից հաճախ ընկալվում է որպես համայնքի կողմից տարբեր մակարդակներում ոչ պաշտոնական «թույլտվության» տրամադրում՝ հանքարդյունահանող ընկերության գործունեություն ծավալելու համար:

ՀՍԼ-ն իր տեղն է գտել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության այլ հայեցակարգերի կողքին, որոնք նպատակ ունեն ցույց տալ ընկերության նվիրվածությունը կայուն տնտեսական զարգացմանը: Զարմանալի չէ, որ ՀՍԼ-ն նաև զգալի հետաքրքրություն է առաջացրել քաղաքականություն մշակողների և գիտնականների շրջանում, որոնք ուսումնասիրել և հետազոտել են հարաբերությունները ռեսուրսների արդյունահանման, համայնքների և կայունության միջև հարաբերությունները:

Ռեսուրսատար ոլորտներում ՀՍԼ-ի օգտագործումն արժանացել է նաև քննադատական գնահատականի [6]: Մի շարք գիտնականների հիմնական մտահոգությունն այն է, որ ՀՍԼ-ն ընկերությունների կողմից ռեսուրսների հասանելիությունն ապահովելու կոպիտ փորձ է՝ համայնքի իրական և պոտենցիալ դիմադրության պարագայում [7]: Օուենը և Քեմփը, օրինակ, գրել են, որ ՀՍԼ-ն շատ հեռու է հանքարդյունաբերության հիմնական շարժիչ ուժը լինելուց, և եթե այն որևէ իմաստ ունի, ապա դա ռեսուրսների նկատմամբ հասանելիությունը կորցնելու վախն է: Այլ հեղինակներ պնդում են, որ ՀՍԼ-ն ուղղված է ռեսուրսների արդյունահանման հակազդեցության նվազմանը, այլ ոչ թե համայնքի հետ նշանակալի հարաբերությունների ստեղծմանը [8]:

Այնուամենայնիվ, կան ծանրակշիռ ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ բնապահպանական արդարության համար պայքարող կազմակերպությունները և ռեսուրսների զարգացումից տուժած ազդակիր համայնքները «խլել» են ՀՍԼ-ի վերահսկողությունը արդյունաբերությունից: Վերահսկողության կորստի այդ չափանիշներից է ՀՍԼ-ն օգտագործող բնապահպանական արդարության խմբերի օգտագործումը՝ առավել ընդգրկուն տարածքներում ընդդիմության լայն ցանցի ստեղծման համար [9]: Միևնույն ժամանակ, կան ուշագրավ դեպքեր, երբ հանքարդյունահանման ազդակիր համայնքներն օգտագործել են ՀՍԼ-ն՝ հանքերի շահագործման գործընթացներին հակազդելու համար [10]:

Կանադական համատեքստում Գանսթերը և Նոյբաուերը նշում են հանքարդյունահանման հետ կապված վեճերում սոցիալական լիցենզիայի արմատական, հակահեգեմոնական ներուժի մասին:

ՀՍԼ-ն, կարծես, արդյունաբերության կողմից վերահսկվող մոտեցումից անցում է դիսկերի կառավարման հայեցակարգին, ինչը հնարավորություն է տալիս ազդակիր և տվյալ պահին ազդեցություն չկրող, բայց պոտենցիալ ազդակիր համայնքներին միավորվել և վիճարկել շրջակա միջավայրին վնաս հասցնող հանքարդյունահանման նախագծերը և դրանք կարգավորող թերի կամ թույլ ակտերը:

Թերևս զարմանալի չէ, որ արդյունաբերողները չեն ողջունել սոցիալական ազատության «նոր հետազիծը»: Իրոք, տարբեր երկրներում արդյունաբերության ոլորտի կողմից ՀՍԼ-ի վերաբերյալ բուռն քննադատություն է հնչել [11]:

Բարձրաձայնված տեսակետները համահունչ են տարբեր տարածաշրջաններից ստացված հաղորդագրություններին, և դրանք ենթադրում են, որ արդյունաբերությունը վերանայում է ՀՍԼ-ի դերը ընկերություն-համայնք հարաբերությունների մեջ:

Իհարկե, համայնքների և բնապահպանական արդարության խմբերի տեսանկյունից ՀՍԼ-ն այժմ ավելի մեծ դրական դեր է խաղում, քան նախկինում:

Որոշ հետազոտողներ ՀՍԼ հայեցակարգը բացատրում են երկու գլոբալ գործոնների ազդեցությամբ.

- Տարածելով կայուն զարգացման և դրա այնպիսի բաղադրիչների գաղափարները, ինչպիսիք են բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունությունը, գիտակցումը:

- Բիզնեսի կառավարման և կազմակերպման գլոբալ փոփոխություններով, դրա միջազգայնացմամբ, ընկերությունների վարքագծի վրա ազդակիր համայնք-

ների հետ հարաբերություններում անդրազգային ընկերությունների և միջազգային ֆինանսական ինստիտուտների և կազմակերպությունների կողմից առաջ քաշվող պահանջների աճով:

Մեր կարծիքով՝ առավել կարևոր է երրորդ գործոնը՝ համայնքների կառավարման նկատմամբ մոտեցումների փոփոխությունը, այն է՝ տեղական ինքնակառավարման, համայնքային ռազմավարական կառավարման, ինքնազարգացման սկզբունքների ակտիվ իրականացումը, որը ենթադրում է ազդակիր համայնքների ավելի ակտիվ մասնակցություն իրենց սոցիալական-տնտեսական և բնապահպանական զարգացման կառավարման գործում:

Ընդունված է համարել, որ ՀՍՀ հայեցակարգի ակունքը ավելի խոր և ավելի վաղ տեսականորեն զարգացած և գործնականում օգտագործվող կատեգորիա հանդիսացող ԿՍՊ է: ՀՍՀ հայեցակարգը կարելի է դիտարկել որպես ԿՍՊ ածանցյալ ձևերից մեկը: Այնուամենայնիվ, դրանք նույնական հայեցակարգեր չեն:

ԿՍՊ-ն ընկերության կողմից ներքին և արտաքին սոցիալական ծրագրերի իրականացմանն ուղղված պարտավորությունների և գործողությունների ամբողջությունն է, որի արդյունքները նպաստում են ընկերության զարգացմանը, նրա հեղինակության և իմիջի բարելավմանը, կորպորատիվ ինքնության հաստատմանը և ապրանքանիշերի զարգացմանը, ինչպես նաև. պետության, բիզնես գործընկերների, համայնքների և հասարակական կազմակերպությունների հետ կառուցողական գործընկերության ընդլայնմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hamann R., Kapelus P. and O’Keefe E.** Mining Companies and Governance in Africa / In J. Sagebien and N.M. Lindsay, eds. - Governance Ecosystems: CSR in the Latin American Mining Sector. - London: Palgrave Macmillan, 2011.- P. 260-276.
2. <https://www.ipieca.org/resources/guide-to-ipieca-resources>
3. **Thomson I. & Boutilier R.G.** Social license to operate /In P. Darling (Ed.), SME Mining Engineering Handbook // Society for Mining, Metallurgy and Exploration. - Littleton, CO, 2011. -P. 1779-1796.
4. Pike 2011, p. 3; Dodgy Deal, 2012 Minas Conga mining project.- Peru, 2012.
5. Cooney, 2017. Reflections on the 20th anniversary of the term social licence // Journal of Energy and Natural Resources Law.-2017.- 35. –P. 197–200.
6. **Duncan E., Graham R., & McManus, P.** No one has even seen...smelt...or sensed a social licence: Animal geographies and social licence to operate // Geoforum. -2018.- 96. –P. 318–327.

7. **Kemp D., & Owen J.** The industrial ethic, corporate refusal and the demise of the social function in mining //Sustainable Development. - 2018. - 26(5).-P. 491–500.
8. **Zahara, et al** //International Journal of Data and Network Science. - 2016.
9. **Gunster & Neubauer**, 2018; Lester, 2016; Murphy-Gregory, 2017.
10. **Curran G.** Social licence, corporate social responsibility and coal seam gas: Framing the new political dynamics of contestation // Energy Policy. – 2017.- 101. – P. 427–435.
11. Breakeyridge, 2018; Jenkins, 2018; Malpass, 2013; Poynter, 2012.

Д.А. АНДРОЯН

СОЦИАЛЬНАЯ ЛИЦЕНЗИЯ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ОТРАСЛИ

Горнодобывающие компании внедрили термин "ответственная горнодобывающая промышленность", чтобы описать усилия этих компаний по обеспечению поддержки общественности и сообществ при реализации горнодобывающих проектов. Это называется социальной лицензией на добычу. И если раньше управляющего горнодобывающей компанией интересовали только вопросы эксплуатации, то теперь для стабильной работы горнодобывающего объекта необходимо наладить связи с общественностью и договориться с общественностью.

Рассмотрены вопросы социальной лицензии горнодобывающей промышленности.

Ключевые слова: социальная лицензия, корпоративная социальная ответственность, ответственная горнодобывающая промышленность.

D.A. ANDROYAN

THE SOCIAL LICENSE IN MINING

Mining companies have coined the term "Responsible Mining" to describe the efforts made by miners to ensure public and community support for mining projects. This is called a social mining license. And if earlier the manager of the mine was interested only in the issues of operation, now for the stable operation of the mining facility, it is necessary to establish relations with the public and reach an agreement with the community.

The article considers to the problems of social license in mining.

Keywords: social license, corporate social responsibility, responsible mining.